

տեմբեր 9ին Տոռնիէլլօ քարտուղարը կը կարգայ Ս. Ժողովի ԶԲ. Նիստին⁹ մէջ «Հայոց համար Դպրանոց մը բանալու վերաբերեալ գրութիւններն եւ Հայոց Հիւրանոցի (hospitium) կանոնադիրը, Գրիգոր ԺԳ.ի նոյն Դպրանոցի կառուցման մասին կոնդակը, զոր մահուանէն 5 ամիս յառաջ հրատարակած էր, ... եւ ի վերջոյ Ս. Ժողովի 1623 տարւոյ հրամանագիրը, որով նոյն ազգին համար Հայաստանի մէջ բացուելիք դպրանոցին ի նպաստ տարեկան 150 սկուգ կը նշանակուէր: Մեծապայծառ Հարք յանձնեցին յիշեալ վեր. Տեղեկատուին, որ Հայոց Հիւրանոցին եւ անոնց Եկեղեցւոյն եւ Հիւրանոցին վերաբերեալ տուները այցելէ եւ անոնց մտից եւ ելից մասին հաւաստի տեղեկութիւններ հաւաքէ. եւ ապա Մեծապ. Տ. Բուրգեզիօ կարդինալին՝ Հայոց պաշտպանին յայտնէ Ս. Ժողովին գիտաւորութիւնն եւ բաղձանքը եւ հարցնէ թէ Հիւրանոցին եւ անոր պաշտօնեաներու համար եղած ծախքէն դուրս կ'աւելնա՞յ գումար մը, զոր հնար ըլլայ այն հայ պատանիներու համար գործածել, որոնք կաթողիկէ հաւատքի, լատին լեզուի եւ ուսմանց մէջ կը կրթուին. որովհետեւ Ս. Ժողովը գիտակից իր պարտականութեան կը խորհի գէթ այժմ բանալ քանի մը հայ պատանիներու համար փոքր Դպրանոցի մը սահմանի մէջ տուն մը, մինչեւ որ Աստուծոյ օգնութեամբ աւելի լայն չափով միջոցներ գոյա-

⁹ Acta S. C., an. 1626—1627, vol. 4, p. 297.